**ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ**

«03» մարտի 2026 թ. N 34-Ա/1

# Հ Ր Ա Մ Ա Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 10-Ի N 137-Ա/1 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով.

**ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝**

1. Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2025 թվականի նոյեմբերի 10-ի «Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին կից հասարակական խորհրդի հետ աշխատանքների համակարգող և պատասխանատու պաշտոնատար անձ նշանակելու մասին» N 137-Ա/1 հրամանի 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին կից հասարակական խորհրդի (այսուհետ՝ խորհուրդ) հետ աշխատանքների համակարգող նշանակել մամուլի քարտուղար Նվեր Կոստանյանին, իսկ պատասխանատու պաշտոնատար անձ՝ Նախարարության տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի գլխավոր մասնագետ Գայանե Մանուկյանին:»:

Ստորագրող
ԱՐՍԵՆ ԹՈՐՈՍՅԱՆ
3114820360
2026-03-03 17:30:43 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ԱՐՍԵՆ ԹՈՐՈՍՅԱՆ